




ՍԱՄՎԵԼ ԱՆԹՈՍՅԱՆ

(Բանասիրական գիտությունների թեկնածու)

ՀԱՅ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԾՈՒՄՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԸՐՋԱՆՈՒՄ

Հայ ժողովրդին պարտադրված պատմական դառն ճակատագրով պետք է բացատրել, անշուշտ, այն փաստը, որ բարձր քաղաքակրթություն և պատմական անցյալում քերականագիտական ու ոճագիտական ավանդույթներ ստեղծած մեր ժողովրդի լեզվաբանական գիտությունը 18—19-րդ դարերում գտնվում էր մայր հայրենիքից դուրս, ընդ որում հայոց լեզվով զբաղվում էին առավելապես օտարազգի հայագետները:

Պանդուխտ էր հայը. պանդուխտ էր և հայագիտությունը:

Միայն 19-րդ դարի վերջերին, երբ ապարեզ իջան մեծ հայագետներ Ստ. Պալասանյանը, Ստ. Մալխասյանը, Մ. Աբեղյանն ու Հ. Աճառյանը, հայ լեզվաբանությամբ զբաղվելու նախաձեռնությունն անցավ հայազգի գիտնականներին, թեև դեռ կենդանի էին օտարազգի այնպիսի հեղինակություններ, ինչպիսիք են՝ Ա. Մեյերն, Հյուբշմանը, Մարկվարտը, Կարստը, Ն. Մաուր և այլք:

Մինչև Հայաստանում սովետական կարգերի հաստատումը հայ լեզվաբանության ուսումնասիրության առարկան գրաբարն էր: Այդպես էր հետևյալ երկու պատճառներով. ա) մինչև 19-րդ դարի վերջին քառորդը հայ իրականության մեջ վեճ էր գնում գրաբարի՞ն, թե աշխարհաբարի՞ն նախապատվություն տալու հարցում: Չմոռանալք, որ մեծն հայր Արսեն Այտընյանը 1866 թ. տպագրած

իր հոշակապ աշխատության մեջ («Քննական քերականություն») պայքար ծավալեց հոգուտ աշխարհաբարի քաղաքացիական իրավունքի: Նշանակում է՝ աշխարհաբար լեզուն, զոհն է գիտական ուսումնասիրության ենթարկվելու իմաստով, դեռևս նպատակահարմար չէր համարվում. բ) օտար հայագետները հայերենն առավելապես ուսումնասիրում էին հնդեվրոպական քույր-լեզուների հետ համեմատելու սկզբունքով, ուստի այդ նպատակի համար, բնականաբար, պետք էր ղիմել հայոց լեզվի, ըստ հնարավորին, առավել հին արտահայտությանը՝ գրաբարին, որը Մխիթարյան հայրերի կողմից բազմակողմանիորեն ուսումնասիրված էր:

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո հայ լեզվաբանության ճակատագիրն արմատապես փոխվեց: Մահմանադրական օրենքով սկզբում տարրական, ապա աստիճանաբար յոթնամյա ու միջնակարգ կրթությունը պարտադիր դարձավ յուրաքանչյուր սովետական քաղաքացու համար: Ավելին՝ անգրագիտության վերացման հատուկ դասընթացներ (լիկլարաններ) բացվեցին նույնիսկ դպրոցական տարիքն անցած քաղաքացիների համար: Սովետական Հայաստանը վերածվեց անգրագիտության վերացման մի համայնական դպրոցի: Մայրենի լեզվով դպրոցական ուսումնառության պահանջներին բավարարություն տալու նպատակով հրատարակվե-

գին հայոց լեզվի՝ քերականության թե քերականության բազմաթիվ դասագրքեր: Այդ նպատակի համար հայերաբան էր գիտականորեն ուսումնասիրել արևելահայ գրական հայերենը, գտնել նրա զարգացման նոր օրինակները, սակայն դրանք, ինչպես այժմ ընդունված է ստել, «ֆորմալ քերականության» սկզբունքներով շարադրված լինելով, ռավարար չէին համարվում դպրոցական ուսուցման համար:

1934 թ. հրատարակվեց պրոֆ. Ա. Ղարիբյանի «Հայոց լեզու» (ձևաբանության բաժին) դասագիրքը, իսկ 1937 թ. պրոֆ. Գ. Սևակի «Հայոց լեզվի շարահյուսություն» դասագիրքը, որոնք անցած երեսուն տարիների մեծագույն կրթիչն ու դաստիարակիչն է: Հայոց լեզուն լավագույն ուսուցանելու համար պրոֆ. Ղարիբյանը ինչպես տարական, ապա էլ բարձր դասարանների ուսուցիչներին օգնելու նպատակով գրեց հայոց լեզվի ուսուցման մեթոդիկայի ձեռնարկներ: Նոր մեթոդաբանությամբ կազմված դասագրքերով՝ դպրոցական ուսումնառության գործն ապահովված էր: Մյուս կողմից՝ երևանի համալսարանում, ապա նաև այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում սկսեցին գործել հայոց լեզվի և գրականության ֆակուլտետներ, որտեղ հայ երիտասարդությունը գիտականորեն ծանոթանում էր մայրենի լեզվին, նրա անցած պատմական ուղուն:

Սովորող երիտասարդությանը հայերենագիտական մի հետևողական դասընթաց տալու նպատակով Մ. Աբեղյանը 1931 թ. լույս բնծալեց «Հայոց լեզվի տեսություն» խիստ արժեքավոր աշխատությունը, որի՝ վերջերս (1965 թ.) վերահրատարակման փաստը լավագույնս ապացուցում է, որ այս աշխատությունը ոչ միայն պատմականորեն է արժեքավոր, այլ գործնական իմաստով իր նշանակությունը չի կորցրել նաև մեր օրերում, երբ հայագիտությունն արդեն, իրապես, փառավոր ուղի է անցել: Արևելահայ գրական հայերենի քերականական կառուցվածքի ուսումնասիրության համար մի արժեքավոր ձեռնարկ էր պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայոց լեզվի տեսություն» աշխատությունը (գիրք Ա, 1939, գիրք Բ, 1947), որն ահա մոտ երեք տասնամյակ երիտասարդ հայագետների համար կարևոր ձեռնարկ է:

Ոչ միայն հայ, այլև ամբողջ սովետական լեզվաբանության համար կարևոր նվաճում էր նաև պրոֆ. Է. Աղայանի ընդհանուր լեզվաբանության դասընթացը (1-ին հրատարակություն՝ 1947 թ.), որը հատկապես վերականգնողից հետո մեծապես օգնեց երիտասարդ հայագետներին լեզվաբանական գիտության հիմունքներին ծանոթանալու գործում: Կարևոր է դիտել, որ պրոֆ. Աղայանը ընդհանուր լեզվաբանության տեսական մասին, նշենք, որ նա առաջինը ստեղծեց հայ լեզվաբանության պատմության մասին մի ամբողջական աշխատություն, ապա նաև՝ գրաբարի քերականության քննություն՝ լեզվաբանական նորությունների մեթոդների կիրառությամբ:

Հայտնի նշանատություն է. ամենայն լեզվի գիտական ուսուցումը թերի է, եթե մասնագետը ծանոթ չէ տվյալ լեզվի պատմությանը, անցյալում կրած բարեբաղնական փոփոխություններին: Ահա ինչու գրաբարագետ հայտնի հեղինակություններ՝ Հ. Աճառյան, Մ. Աբեղյան և այլք, պատրաստեցին ու հրատարակեցին գրաբարի մի շարք ձեռնարկներ, որոնք, անտարակույս, մեծապես նպաստեցին հայագետների նոր սերնդին՝ ուսումնասիրելու և տիրապետելու մեր նախնյաց նվիրական ու բազմախորհուրդ լեզվին: Գրաբարի ձեռնարկների մեջ բացառիկ ուշադրության է արժանի պրոֆ. Ա. Աբրահամյանի բարձրագույն ուսումնական հաստատությունների դասագիրքը, որի մեջ ուսուցանվող նյութն առավել ամբողջական ու մշակված և մեթոդական տեսակետից առավել մատչելի է մատուցված:

Սովետական Հայաստանում ծավալված դպրոցական ուսումնառության նման անհախառն փաստը հրամարական դարձրեց մեր նախնյաց լեզվի ավանդական ուղղագրության վերանայման հարցը: 2-րդ անգամ հանդերձ, որ ուղղագրության փոփոխությունը լեզվական արմատների, արտմական հնչյունափոխության քննադատ շոշափելիորեն ընթերցելու և մի շարք այլ հարցերում դժվարացրեց ուսման գործը, — այնուամենայնիվ պետք է ընդունել, որ 1922 թ. կատարված ուղղագրական փոփոխությունը, հատկապես 1940 թ. մասնակի բարեփոխությունից հետո, մեծապես նպաստեց հարց լեզվով անվստյալ գրելու, նրանում կատարված աստիճանական հնչյունափոխության բազմաթիվ երևույթների արտասանությունն առավել հարազատ մերարտադրելու և ընդհանրապես հանրությանն ուսուցանվող մայրենի լեզուն առավել պարզեցրած ձևով մատուցելու գործում: Ի որանայու նպատակ հունենալով այս հարցի մեջ, սակայն քաջ գիտնալով, որ առհասարակ շատերը Մ. Աբեղյանի կատարած ուղղագրական բարեփոխությունները անընդ-

պատակահարմար էն համարում, այլ ռի ուզենալիք հավատացնել, որ այդ միջոցառումը, չենք ծխտում՝ իր որոշ անպատեհություններով հանդերձ, պատմականորեն իրեն արդարացրեց, մեծապես նպաստեց, որ հույ մարդն առավել գրագիտությամբ գրել կարողանա իր սարեհի լեզվով:

Լեզվի հարցերում ավանդապահությունը, թվում է, գովելի հատկություն է: Սակայն չմոռանալ, որ անգլիացիք գիտական հաստատություններ են զբաղեցնում, որպեսզի կարողանան բանավոր. մեջերենին առավել հարազատ գրավոր արհեստագիտությամբ լեզվի ուղղագրության համակարգ ստեղծել:

Սովետական շրջանում հայ լեզվաբանության նվաճումների մեջ առավել ուշադրության արժանի են բառարանագրական աշխատությունները: Հայագիտությունն անգլալից ծառանգել էր բառարանագրական հիմնային ավանդույթներ. հրապարակի վրա կաին Հին և Նոր հայերենի բառարաններ, Առձեռներ, Գաբամաններ, գալստականներից՝ Հ. Աճառյանի «Հայերեն գալստական բառարան» (1913 թ.) ու հայտ Ս. Ամատունու «Բառ ու բանը» (1912 թ.) ևն: Սակայն արևելահայ գրական լեզվի համար գիտական ու հանրամատչելի իմաստով բառարաններ գրեթե չկային: Մյուս կողմից՝ հատուկ է, որ պետական քաղաքականության ուժ ստացավ՝ Հայաստանը գոյություն ունեցող հետամնաց երկրի դարի առաջավոր երկրների արդյունաբերության ու տեխնիկային համապատասխան ընթացող երկրի դարձնելու որոշումը: Ծուռով Հայաստանում սկսեցին գործել արդյունաբերության այնպիսի ճյուղեր, գիտության ու տեխնիկայի այնպիսի բնագավառներ, որոնց մասին անցյալում միայն կարելի էր երազել: Իսկ առ յոդորին պետք էր հայկազյան լեզվով անվանում տալ: Կլանքը հրամայական պահանջ դրեց կազմել տերմինաբանական բառարաններ, որպեսզի հայ մասնագետները կարողանային հաշտել բառերով անվանել իրենց ձեռքի գործիքները, զբաղմունքի հետ կապված երևույթներն ու հասկացությունները: 1920-ական թվականները տերմինաբանական բառարանների կազմությանն ընդ որում հարազատ ընթացքին: Թե ի՞նչ աստիճանի հասարակական արժեք ու կարևորություն էր տրվում այդ հարցին, կարելի է դատել բառարանագիր հեղինակություններից. նշենք, որ մեծ հարգանք Մ. Աբեղյանը կազմեց ռուս-հայերեն ռազմական բառարան (1925 թ.). Ս. Մայիսյանը հեղինակակա էր 1925 թ. կազմված երկաթուղային տերմինների բառարանին, սրբ. Հ. Աճառյանը մասնագետ հեղինակների մի խմբի հետ մասնակցեց չհայերենական տերմինների բառարանի կազ-

մությանը (1928 թ.), իսկ բանաստեղծ Հովհ. Հովհաննիսյանը՝ ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարանի կազմությանը (1924 թ.): Զմուռանալ նշել բժշկական Վ. Արծրունու ռուս-լատին-հայ բժշկագիտական տերմինների եռալեզվյան բառարանը (վերահրատարակված 1956 թ.), որը մեծապես նպաստեց մեր հանրապետության մեջ հայազգի մեր բժշկների պատրաստմանն ու կատարելագործմանը:

Տերմինաբանական բառարանների կազմության այս գեղեցիկ ավանդույթը հետագայում էլ շարունակվեց, և այսօր հրապարակի վրա կան ժողովրդական տնտեսության այնպիսի բնագավառների 30-ից ավելի տերմինաբաններ, այդ թվում՝ մաթեմատիկական տերմինների բազմալեզվյան, մարմնամարզության, աստղաբանական գործառնության կլ, կլ: Արժե հիշել, որ վերջին չորս տասնամյակում հայոց լեզվի բառական հիմնական ֆունդի մեջ մտել են մի քանի տասնյակ հազար մեր բառեր, առավելապես՝ հայերեն նորակազմություններ, ինչպես նաև անհրաժեշտ հարկադրականի չափով օտարազգի տերմիններ, որոնք մեծապես հարստացրին մեր լեզուն՝ կլանքի կոչելով նրանքին կենսունակություններն ու արտահայտչական հնարավորությունները:

Արդար կլներ ասել, որ բազմադարյան պատմություն ունեցող մեր լեզուն մի քանի դարաշրջանների միասին վերցրած իսկ բառական առումով այնքան չէր հարստացել, ինչքան վերջին չորս տասնամյակների ընթացքում: Այժմ հայոց լեզվով, նվազագույն փոխառության պարմանով, գրվում ու թարգմանվում են մեր դարի բոլոր իրական գիտությունների վերաբերյալ աշխատություններ՝ լեզվով մատչելի ինչպես գիտնականի ու մասնագետի, այնպես էլ ուսանողի ու աշակերտի համար:

Իրական գիտությունների ուսուցմամբ բարձրագույն ուսումնական հաստատությունների կլանքի կոչվելով հրամայական սլահանց դարձավ առավել լավ տիրապետել տերմիններին, որպեսզի ռուսերենի միջոցով հայ մասնագետները ծանոթանային օտար լեզուներով գրված ու ռուսերեն թարգմանված գրականությանը: Ահա այս նպատակով 1933—35 թթ. հրատարակվեց ռուս-հայերեն երկհատորակ կլ, ինչպես ընդունված է ասել՝ չորսի բառարանը (հեղինակներ՝ Ալ. դալբեկյան, Սոմոկիլյան, Տեր-Մինասյան, Փոթեյան), որը մեծապես նպաստեց հայազգի մասնագետներին՝ ռուսաց լեզուն յուրացնելու և դրանով իսկ համաշխարհային Գրքին հաղորդակից լինելու գործում: Ուղիղ երկու տասնամյակ հետո, 1954—1958 թթ.,

հրատարակվեց ռուս-հայերեն քառահատոր քառարանը:

Կառավարական ուղադրության առարկա դարձավ նաև հայերեն քաղաքական քառարանի հրատարակումը: Դեռևս 1922 թ. Հայկեստիստը բազմահմուտ բանասեր Սո. Մալխասյանցին հանձնարարեց կազմել մի այդպիսի քառարան: Մալխասյանցն այդ քառարանի վրա աշխատեց մոտ երկու տասնյակ տարի և ահա 1944—45 թթ. հրատարակեց իր քառահատոր քառարանը: Մալխասյանցի քառահատորը հայոց լեզվի մի որոշակի շրջանի բաների պատկերը տալուց ավելի ամբողջ հայերենի քառագանձի մի քանգամիկ ու յուրատեսակ աշխատություն է, որ ի մի են բերված ինչպես մեր նախնյաց լեզվի ու «ստորին գրաբարի» (միջին հայերեն), այնպես էլ հայ բարբառների քառական հարստություններն ու մի քանի տասնյակ հազար նորակազմություններ:

Աշխատության բնույթի հետևանք հանդիսացող՝ զործնական կիրառության համար որոշ անպատեհություններ ներկայացնելով հանդերձ Սո. Մալխասյանցի քառարանը պիտի մնա որպես հայագիտության հույակերտ կոթողներից մեկը: Սփյուռքահայության կարիքներին ընդառաջելու նպատակով Մալխասյանցի քառահատորը 1954—1958 թթ. վերահրատարակվեց Բելյուրում: Բառարանագրական աշխատակներին եռանդուն մասնակցություն ունի նաև մեծավաստակ հայագետ Հ. Աճառյանը: 1942—48 թթ. նա հրատարակեց «Հայոց անձնանունների քառարանը» (4 հատորով), իսկ 5-րդ հատորը հրատարակվեց հետմահու: Հ. Աճառյանի այս աշխատանքը հալոց հատուկ անունների գերկատարյալ հանրագիտարան է: Մալխասյանցի և Մանուկյանի շրջանի հայ քառարանագրության թագն ու պսակը Հ. Աճառյանի «Հայերեն արմատական քառարանն» է: Առանց հայ պետականության հոգատարության՝ անհնար էր հրատարակել մի այդպիսի քառարան: Դրանում համոզվելու համար պետք է կարդալ մեծավաստակ հայագետի քառարանի՝ իր իսկ նկարագրած ուղիականը (տե՛ս Հայերեն արմատական քառարան, 7-րդ հատոր, հավելված, 1935 թ.): Հ. Աճառյանի հաղորդմամբ՝ 1925 թ. Կենտրոնական արտոնել էր «Արմատականի» հրատարակումը: Բառարանի 6 հատորները լույս են տեսել 1926—32 թթ., Ա—Գ հատորները՝ համալսարանի կողմից, իսկ մնացածը՝ Մելքոնյան ֆոնդի միջոցով: 7-րդ հատորը (տպագիր) լույս տեսավ 1955 թ.: Մոտ 9.000 մեծադիր էջերով քառարան հրատարակելը սղն ժամանակվա պայմաններում ուղղակի հերոսություն էր: Պատկանական չէ, որ երախտապարտ հեղինակը

«Արմատականի» հրատարակմանը մասնակցություն ցուցաբերած կազմակերպություններին ու անհատ մարդկանց շնորհակալություն հայտնելով՝ չի մոռանում իր շնորհակալության խոսքն ասել «Հայաստանի Խորհրդային իշխանությանը, որ առանց որևէ դժվարության, առանց որևէ գրաքննական ձևականության, սկզբից մինչև վերջ ազատ թողեց գրքիս հրատարակությունը» (տե՛ս Հավելված, Երևան, 1935 թ., էջ 204):

Մենք մեծապես կարող ենք հպարտանալ, որ համաշխարհային չափանիշով լեզվաբանական մի այսպիսի կոթող մեր հայրենակիցն է գրել, և այդ վիթխարի աշխատանքը լույս է տեսել Երևանում:

Հ. Աճառյանի «Արմատական»-ի մասին առավել բնդհանուր մի պատկերացում կազմելու համար արժեք բերել աշխարհահռչակ լեզվաբան ու հայագետ Անտոնա՛ Մելեի, ասլա բազմահմուտ բանասեր հայր Ն. Ալիևյանի կարծիքները. «Ոչ մի լեզվի համար չկա,—գրում է Ա. Մելեյն,—արքան ճոխ, այսքան կատարյալ ստուգաբանական քառարան»: Մելեյն ինքն էլ լատիներենի արմատական քառարանի հեղինակ է:

«Հսկայական գործի մը առջև կը գտնվիմ,—բացագանչում է հայր Ալիևյանը,—...ես պիտի նախընտրեի կոչել Բառագանձ հայերեն լեզվի... զգլխի ծրագիր արդարև: Ի տե՛ս այս ծրագրին պիտի բացագանչեի, թե հեղինակը ձեռնամուխ եղած է հանձնարին: Անհատական ուժը չէր կարող հասնիլ այս բնդարձակաժալ կառուցվածքին կատարման: Բայց Աճառյան հասած է բարյալ: Նա տված է աշխատություն մը, որ կը մնա աննախընթաց օրինակ, նույնիսկ համաշխարհային գրականության մեջ»:

Ինչ կարելի է ավելացնել այս բոլորից հետո: Պրոֆ. Հ. Աճառյանի անձը, գիտական բացառիկ նվիրումն ու իր հայագիտական մեծագործ արտադրողականությունը մեզ իրավունք են տալիս ասելու, որ նա՛ է ա՛ն երեւոյթ-անհատը, որի մասին ֆրանսիացի պատմաբան Օգյուստեն Թիերին գրել է: «Կա աշխարհում մի բան, որ արժե ավելի, քան նյութական զվարճությունները, ավելի, քան հարստությունը, ավելի, քան հենց ինքը ստողությունը,—դա նվիրումն է գիտությանը»:

Հայ քառարանագրության գեղեցիկ ամանդույթներն իրենց բարի պտուղները տրվին: վերջերս լույս տեսավ Աշոտ Առքիասյանի հայերենի հոմանիշների քառարան՝ 83.000 բաներով ու ռմական-դարձմածբային կապակցություններով: Արդեն պատրաստ է գիտությունների ակադեմիայի լեզվի ինտիտուտի կազմած հայերեն քառահատոր նոր քաղաքական քառարանը, որը,

ի տարբերությունն Մալխասյանցի աշխատության, առավելապես ներկայացնելու է հայոց լեզվի (արևելահայ թե արևմտահայ հատկապես) որոշակի ժամանակաշրջանի՝ վերջին հարյուրամյակի պատկերն ու բառազանգը:

Պատրաստ են նաև բացատրական ու երկլեզվյան մի շարք այլ բառարաններ, որոնք առաջիկա տարիներին լույս աշխարհ կգան:

Վերևում մենք առավելապես գործնական լեզվաբանության մասին խոսեցինք՝ կառուցված հայոց լեզվի գործնական կիրառության ընդարձակման հետ: Չպետք է մոռանալ, որ գործնական խնդիրներին բավարարություն տալով հանդերձ հայ լեզվաբանական միտքը զարգանում էր նաև տեսականորեն: Այս կարգի աշխատանքների մեջ առաջինը պետք է նշել պրոֆ. Գ. Ղափանցյանի «Ընդհանուր լեզվաբանություն» աշխատությունը (1939 թ.), որը ժամանակի լեզվաբանական գիտության բարձր մակարդակից գրված մի եզակի երկասիրություն է և մեծ ներդրում ոչ միայն հայ, այլև ամբողջ սովետական լեզվաբանության մեջ: Այնուհետև՝ պրոֆ. Ղափանցյանը, հավատարիմ մնալով իր որդեգրած «ասիանիկ» տեսությանը, թե՛ «Հայաստան-հայերի օրրան» (1947 թ.) և թե՛ հետմահու լույս տեսած «Հայոց լեզվի պատմության հին շրջանը» (1961 թ.) աշխատություններում ի տարբերություն Հյուբշման-Լե-Է-Աճառյան պատմա-համեմատական դպրոցի ներկայացուցիչների՝ աշխատում էր ապացուցել, որ հայոց լեզվի մեջ առավել շատ են տեղական ասիանիկ լեզվական իրոնությունները, և որ հայոց լեզուն ասիանական-կովկասյան-հնդեվրոպական խաչաձև իրոնից է առաջացել: Այս հիման վրա պրոֆ. Աճառյանի «Արմատական»-ի շատ ստուգաբանություններ վերանայման էին ենթարկվում, իսկ չստուգաբանված հազարավոր բառեր դիտվում էին որպես տեղական, ասիանական լեզուների բառեր: Առանց մանրամասնությունների մեջ խորանայու ասելը, որ պրոֆ. Ղափանցյանի այս նոր տեսակետը իր որոշ բունագրուհի լեզվական համեմատությունների և թեական ընդհանրությունների առկաությամբ հանդերձ հայ լեզվաբանական մտքի առջև առավել լաճ հորիզոններ բացեց, որպեսզի հայերենը հնդեվրոպական հայտնի լեզուների հետ համեմատվելուց բացի, համեմատվի նաև անդրեհնդին ժողովուրդների լեզուների հետ, մի հանգամանք, որ մեծապես կնպաստի հայոց լեզվի բառազանգն առավել ամբողջական ու ստեղծագործական գործին: Այսօր, բոլորովին այլ սկզբունքով, լեզվաբանական նորագույն մեթոդների կիրառությամբ ուսումնասիրվում են հայ ժողովրդի և նրա լեզվի աղերսակցությունները պատմական անցյալում: Երբևէ հա-

րելան ժողովուրդների ու նրանց լեզուների հետ: Այս բնագավառում բացառիկ արժեք են ներկայացնում բազմաթիվ լեզվաբան պրոֆ. Գ. Զահրուկյանի երկասիրությունները, հատկապես վերջերս լույս տեսած «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմություն» (1967 թ.) աշխատությունը, որը, կարծում ենք, համայն աշխարհի հայագետների ուշադրությանն ու գնահատանքին կարժանանա:

Այսօր հայ լեզվաբանության նվաճումներին հաղորդակից են տարբեր մայր ցամաքների լեզվաբանական գիտության ներկայացուցիչները: Պետք է խոստովանել, որ այս հարցում պրոֆ. Գ. Զահրուկյանի ծառայությունները հիշալի մեծ են:

Ընդհանուր առմամբ պետք է նկատել, որ լեզվաբանական տեսական աշխատությունների մեջ առավել շատ են հայոց լեզվի պատմության ուսումնասիրությանը նվիրված աշխատությունները, որոնց մեջ, անկասկած, առաջնակարգ տեղ է գրավում պրոֆ. Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» երկհատոր երկասիրությունը: Հեղինակն իր այս աշխատանքում առավելապես «Արմատական»-ի տեսությունն է տվել, այսինքն թե՛ ինչ ծավալ, արժեք ու տեսակարար կշիռ են ներկայացնում հայոց լեզվի մեջ բնիկ հնդեվրոպական, ապա և հին ու նոր այլալի լեզուներից փոխառված բառերը: Սակայն սխալ կլինեք կարծել, որ պրոֆ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» սույն բառագիտական մի վերլուծություն է: Հատկապես 2-րդ մասում հեղինակը հայոց լեզվի անցած պատմական ողորդ ամբողջ տարածքի վրա բացահայտում է մեր լեզվի բարեշրջական փոփոխությունները, լեզվական ու պատմական առատ փաստերով ցույց է տալիս, որ աշխարհաբար, ուստի և արևմտահայ ու արևելահայ հատվածների նոր գրական լեզուները նախնաց հայերենի՝ գրաբարի դարավոր բնականոն, իր բառերով ասած՝ «լուր բարեշրջական» փոփոխությունների հետևանք են և բառական, քերականական ու արտահայտչական իմաստով աղերսակցվում են գրաբար լեզվին:

Այս բոլորից բացի, իր աշխատության մեջ պրոֆ. Աճառյանը տվել է հայոց լեզվի պատմության ուսումնասիրությունն ամբողջացնելու ծրագիր՝ մասնակցելով այն բոլոր հանգուցային հարցերը, որոնց վրա պետք է աշխատեն հայերենագիտությանը զինվորագրված երիտասարդները: Հ. Աճառյանի այս ավանդները շարունակեց վաղամեծիկ լեզվաբան պրոֆ. Ս. Ղազարյանը, որն իր «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (1954 թ.), ապա և՛ «Միջին հայերեն» (գիրք Ա, 1960 թ.) աշխատություններով մեր լեզվի,

քաղաքացիական պատմությունն առավել մատչելի ձևով ներկայացրեց՝ սովորող երիտասարդությանը:

Աշխարհի բոլոր լեզվաբանները երազել են մի հերոս հանձնար, որ կատարեր աշխարհի բոլոր լեզուների համեմատական քննությունը: Հայաստությանը պիտի նշենք, որ այդ գործն արվեց Երևանում, և խիզախողը պրոֆ. Հ. Անադյանն էր: Նա գրեց «Լիակատար քերականություն հայոց լեզվի» համեմատությանը 562 լեզուների»: Այս աշխատությունը լույս է տեսնում պարբերաբար, արդեն հրատարակվել են «Ներածություն» հատորն ու հերթական մյուս հինգ հատորները: Աշխատության մասին մոտավոր պատկերացում տալու համար ասենք, որ հայոց լեզվի քերականական իրադրություններն ըստ պատեհի համեմատվում են աշխարհի 562 լեզուների հետ: Պրոֆ. Անադյանը լավագույնս ապացուցում է, թե հայերենի շատ տվյալներ ինչքա՛ն կարող են օգտակար լինել ընդհանուր լեզվաբանությանը: Աշխատության «Ներածություն» հատորը, որն ի դեպ ոչ միայն հայագետների, այլ նաև հասարակական գիտությունների ներկայացուցիչների համար սեղանի գիրք է, — այդ հատորում հենց այդպիսի մի վերնագիր էլ կա՝ «Հայերենի մատուցած ծառայությունը գիտության»: Պրոֆ. Անադյանի սույն աշխատությունը ոչ միայն ամբողջ սովետական լեզվաբանության կարևոր նվաճումներից մեկն է, այլև, վերջին հաշվով, պատմա-համեմատական լեզվաբանության նվաճումների մի գեղեցիկ ամփոփումը: Չափազանցած չէինք լինի, եթե ասեինք, որ համայն աշխարհում պատմա-համեմատական լեզվաբանության վերջին տասնամյակների բոլոր երկասիրությունների մեջ չկա մի աշխատություն, որ այսքան համապարփակ ու այսքան ամփոփիչ լիներ:

Միանգամայն իրավացի է պրոֆ. Է. Աղայանը, երբ գրում է. «Եթե Հյուբշմանի ուղղությունը պատկերացնենք իբրև մի սյուն, որի պատկանդանն են հանդիսանում Հյուբշմանի ուսումնասիրությունները, ապա Անադյանի աշխատություններն այդ սյունի խոյակներն են կազմում» (Լիակատար քերականություն, Ներածություն, 1955, էջ XVII):

Մենք արդարացի վարված չէինք լինի, եթե արժանի գնահատանքի մեր խոսքը չասեինք հայ լեզվաբանության կրտսեր սերնդի ներկայացուցիչների մասին: Պետական համալսարանը, ապա նաև հանրապետությունում բացված մանկավարժական ինստիտուտներն իրենց հայագիտական ամբիոններում պատրաստեցին շատ շնորհալի մասնագետներ: Լեզվաբանական մեծ շնչով լրացված մեր հանրապետությունում շնորհալի

երիտասարդ հայագետների պատրաստման համար պարարտ հող կար: Արդարև, 40-ական թթ. վերջերին և հատկապես 50-ական թթ. ապարեզ իջան երիտասարդ լեզվաբաններ, որոնք յուրովսանն օգնեցին լեզվաբանական գիտության զարգացմանը: Նրանցից մի մասը ուսումնասիրեց իր մայրենի բարբառը, ապա և հայոց լեզվի պատմության համար առավել կարևոր նկատվող բարբառները: Այստեղ ևս կար պրոֆ. Հ. Անադյանի թողած ուսումնասիրության գիտական սկզբունքն ու մեթոդը, որն իրենց բարբառագիտական ուսումնասիրություններում առավել կատարելագործել էին պրոֆ. Ա. Կարիբյանն ու պրոֆ. Է. Աղայանը:

Շատ երիտասարդ հայագետներ իրենց ուսումնասիրությունները նվիրեցին հայոց լեզվի ձևաբանության ու շարահյուսության հարցերի հետազոտմանը: Արդար լինելու համար պետք է ասել, որ այս աշխատանքը կատարեցին նրա՛նք և լավ կատարեցին: Ներկայումս չկա հայերենի որևէ խոսքի մաս կամ շարահյուսական առավել կարևոր մի հարց, որ ուսումնասիրված չլինի: Այս շարքում հայագիտությանը բացառիկ ծառայություններ ունեն պրոֆ. Ա. Աբրահամյանը, որն ուսումնասիրել է հայերենի դերբայները իրենց պատմական արտահայտությանը և բարբառային դրսևորումներով, գիտության դոկտորներ Վ. Առաքելյանն ու Այ. Մարգարյանը. առաջինի բազմաթիվ գրչին են պատկանում գիտական մի շարք լուրջ ուսումնասիրություններ, որոնց մեջ բացառիկ արժեք է ներկայացնում «Հայոց լեզվի շարահյուսություն» երկհատորյակը, որն իր տեսակի մեջ եզակի է հայ լեզվաբանական մտքի պատմության մեջ:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրումը և այդ համակարգի մեջ հայոց լեզվի ուսումնասիրությանը կոչված ինստիտուտի անկախ գոյությունը բացառիկ նպաստավոր պայմաններ ստեղծեցին հայ լեզվաբանության զարգացման համար: Եթե մինչ այդ բարձրագույն ուսումնական հաստատություններում ամբիոններին կից լեզվաբանական աշխատանքներով զբաղվում էին գործնական դասավանդմանը զուգահեռ, ապա լեզվի ինստիտուտում գիտական հետազոտությունը դարձավ աշխատանքի բուն բովանդակությունը: Իր գոյության անցած 25 տարիների ընթացքում լեզվի ինստիտուտի աշխատակիցները զգալապես հարստացրել են հայ լեզվաբանությունը: Այստեղ են գրվել ու լույս ընծայվել 10-ից ավելի բարբառների մեծագրական ուսումնասիրություններ, կազմվել են ուս-հայերեն, հայերեն բացատրական, հոմանիշների և այլ բառարաններ: Այստեղ

են իրենց բեղմնավոր աշխատանքը ծավալել պրոֆեսորներ Ե. Տեր-Մինասյանը, Գ. Ջահուկյանը, Վ. Առաքելյանն ու Ա. Աբրահամյանը, որի «Բայը ժամանակակից հայերենում» աշխատությունը անգնահատելի ներդրում է հայ լեզվաբանության մեջ: Այսօր էլ լեզվի ինստիտուտն աշխատում է հայերենի՝ գործնական ու տեսական կարևորություն ներկայացնող բազմաթիվ խնդիրների վրա, որոնք տարիների քրտնաջան հետազոտական աշխատանքի արդյունք հանդիսացող նոր խոսք են գիտության մեջ՝ հսկաներ ունեցած գիտության մի քնազավառի համար: Կուզենայինք հատկապես նշել լեզվի ինստիտուտի՝ գրաբարի, միջին հայերենի և արևմրտահայ աշխարհաբարի մանրագնին հետազոտությունները, որոնք մեծապես կնդպաստեն մեր լեզվի պատմության գիտական ամբողջական ուսումնասիրությանը:

Պրոֆ. Գ. Ջահուկյանի և պրոֆ. Է. Աղաջանի ջանքերի շնորհիվ մեր հանրապետությունում ևս աշխատանքներ են ծավալված՝ լեզվաբանական նորագույն ուղղությունների քննադատական յուրացմամբ հայոց լեզվի հարցերը քննելու ուղղությամբ: Առավել գովելի պետք է համարել, որ վերոհիշյալ հայագետներն այդ ուղղությամբ պատրաստում են երիտասարդ մասնագետներ, որոնք, պետք է հուսալ, մեր լեզվաբանական գիտությունը այս քնազավառում ևս կպահեն առաջավորների դիրքերում:

Այս բոլորից երևում է, որ հայ լեզվաբանությունը Սովետական Միության մեջ առաջին շարքերում է քայլում՝ հաղորդակցվելով ինչպես ոռու, աճպես էլ համաշխարհային լեզվաբանության նվաճումներին:

1950 թ. կեսերից լեզվաբանական միտքը ընդարձակ մարտուղի դուրս եկավ: Վերջին տասնամյակը մեր գիտության համար բացառիկորեն արտադրողական և արդյունավետ դարձավ: Հրատարակվեցին տասնյակ

ուսումնասիրություններ. ինչպես՝ ժառանգություններից՝ Հ. Աճառյանի («Լիակատարը»), Գ. Ղափանցյանի («Հայոց լեզվի պատմության հին շրջանը»), Մ. Արեղյանի («Հայոց լեզվի տեսություն»), երիտասարդ հայագետներից՝ Ս. Աբրահամյանի («Հայերենի չթեքվող խոսքի մասերը»), Ալ. Մարգարյանի («Հայերենի հարադիր բաժերը») ևն, ևն:

Այսպիսով, սովետական շրջանում համայնական գրագիտության շնորհիվ ինչպես էրբևէ մեր պատմության մեջ, մեծացավ գրական լեզվի դերն ու նշանակությունը. այն թափանցեց ամեն հարկից ներս, դարձավ հաղորդակցման միակ ընդունելի լեզվաձևը, այն աստիճան, որ հաղորդակցության դարավոր ուղի անցած հայ բարբառները խաթարվեցին, շատ տեղերում նույնիսկ գիտական ուսումնասիրության համար չբավարարելու չափով:

Գրական լեզուն դարձավ հայրյուր հազարավորների սեփականությունը:

Ներկայումս մեր հանրապետությունում հայ լեզվաբանությանը զինվորագրված մասնագետների մի ամբողջ փառանգ կա: Երիտասարդ հայերենագետները որպես կանոն ծանոթանում են հայ լեզվաբանական մտքի անցյալի նվաճումներին՝ ընդհուպ մինչև Դիոնիսիոս Թրակացու անանուն մեկնիչները: Մեր նախնաց մանրախույզ քննությունները, արտասահմանի անցյալ ու ներկա հայագիտական օջախների ու հայագետների ստեղծած լեզվաբանական երկասիրությունները անգնահատելիորեն օգտակար են մեզ համար:

Հայ լեզվաբանությանը զինվորագրված ամեն հայրդդի քաջ գիտակցում է, որ ժողովուրդն իրեն վստահել է լինել գանձերի գանձի՝ մարենի լեզվի արթուն պահակն ու բարի մշակը, որպեսզի հայ մանուկները միշտ գեղգեղեն ոսկեղենիկ հայերենով:

